

տասխանի՝ ոչ ընդունել զվճիռ ժողովոյ նորա, յորում ոչ պահեցան պայմանքն սակաւութ յառաջ եղեալք, զի ոչ գտաւ անդ ոչ կաթողիկոսն Հայոց եւ ոչ նուիրակ նորին, եւ այն՝ առ կռան իսկ սահմանաց կաթողիկոսութեան իւրոյ: Ապա գրեցին եւ ինքն եւ թագաւորն՝ առ Քահանայապետն, եթէ մեք պատսպարեալք ՚ի ծոց մօր եկեղեցւոյդ՝ ական ունէաք կաթին եւ ոչ այսպիսոյ լեղոյ եւ քացախոյ: Իսկ Լեւոնի չմնայր ՚ի պահուն այլ ինչ, բայց բարձրացուցանել զբարբառ իւր, կամ մոնչին մի ածել բողոքոյ, որ արագ արագ եհաս յականջս խոհեմագոյն կարդինալին Սոփրետի¹⁵², եւ կոչեալ զընկերն՝ զիջուցին զվճիռն խուճապական. եւ ոչ այսչափ միայն, այլ գումարեալ յամսեան սեպտեմբերի խառն ժողով ՚ի Պտղոմայիս քաղաքի՝ կոչելով զթագաւորս Երուսաղեմի եւ Կիպրոսի եւ զայլ աւագանին, եւ ընկալեալ զդեսպան Լեւոնի *Կոստանց Կամարտիաս*, զոր եւ ազգական իւր գրէ Լեւոն, եւ զկարգապետս ասպետացն, համոզկեր եղել եւ արար հաշտութիւն ընդ Տաճարականացն եւ ընդ թագաւորին Հայոց: Վասն որոյ եւ իրաւամբք ՚ի թղթին՝ զոր յետ իրացս եղելոց՝ գրեալ է Լեւոնի առ Իննովկենտ, զովէ զՍոփրետոսի խոհականութիւնն, եւ զՊետրոսի հակառակն. իբրու զի ոչ միայն ոչ ուղիղ դատեր, այլ եւ նկրտեր իմն սարտուցանել զինքն յաթոռոյն Հռովմայ¹⁵³. այլ ինքն կալոց մնալոց էր սերտ եւ հաւատարիմ. վասն որոյ եւ խնդրէր մի՛ եւս զայնպիսի ոք առաքել առ ինքն նուիրակ: Գրեաց եւ Յովհաննէս կաթողիկոս, նախ շնորհակալելով վասն ընծայիցն, եւ ապա զժողովոյն, սպասելով քննութեան Քահանայապետին:

Յետ խաղաղելոյ գումարելոցն ՚ի Պտղոմայիս՝ զսիրտ թագաւորին Հայոց՝ վասն բանի ժողովակին Անտիոքայ, ոչ կարելով հնարս գտանել իրաւախոհութեան ընդ նա եւ ընդ կոմսին Տրիպօլեայ, չուեցին գնացին ՚ի Կ. Պօլիս. իսկ սոքա սկսան վերստին մաքառիլ պնդագոյն եւս, յետ առ վայր մի ՚ի բաց կալոյ Լեւոնի՝ ՚ի շնորհս երեսաց Քահանայապետին. խազմն զրգռեաց անդրէն եւ զանգուսպ ոգի Տաճարականացն, որոց հաշտութիւն առ վերին երեսս էր եղեալ, եւ առ փոքր փոքր ճարակեցաւ

¹⁵² Լեւոն ՚ի թղթին առ Պապն, «Ի բողոքել մեր սաստկապէս ՚ի լսելիս ձեր, ասէ, ջանացան փոխել զմերթիւն ՚ի սիւզ»: Que enim cum ad notitiam Domini Sophredi Cardinalis et Legati devenisset, moleste tulit, et, habito consilio cum Domino Petro collegato suo, ad se accedente, quia instantissime ad audientiam vestram appellabamus, procellam in auram, consilio Domini Cardinalis, convertere studuerunt.

¹⁵³ Quamquam Dominus Petrus Cardinalis ab ea (Romana Ecclesia) nos eliminare laboret.